ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ — ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳՐԵՐ

# ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՀՈՎԻԿ ԱԲՈՎԵԱՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք յղում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանաւոր զաւակիդ եւ Մեր շնորհաւորանքն ու բարեմաղթանքները բերում Ձեր ծննդեան 50-ամեայ յոբելեանի առիթով:

Գոհունակութիւն է Հայրապետիս համար հաստատել, որ հաւատաւոր հայորդուդ սրտաբուխ բարերարութեամբ աւանդաշատ Կողբ գիւղում վեր յառնեց նոր աղօթավայր, որը, արդարեւ, նոր խթան պիտի լինի գիւղի բնակիչների հոգեւոր-եկեղեցական կեանքի պայծառութեան համար: Նորակառոյց այս եկեղեցու նուիրական կամարների ներքոյ հաւատաւոր հայորդիք, եկեղեցական արարողութիւններին եւ խորհրդակատարութիւններին մասնակցելով, պիտի ընդունեն Աստծոյ պարգեւած շնորհները, նաեւ Սրբազան Պատարագի խորհրդով հաղորդուեն Տիրոջ կենարար Մարմնին ու Արեանը եւ հաւատքով ու եկեղեցասիրութեամբ զօրանալով՝ միշտ ամուր պահեն հաւատարմութիւնը սրբազան մեր արժէքներին: Ուրախալի է, որ այս օրը կատարուելու է նաեւ եկեղեցուն կից հովուատան բացումը, որը մեծապէս պիտի նպաստի հոգեւոր սպասաւորների ծառայութեան կազմակերպմանը:

Յարգարժան Պրն. Աբովեան, այս աստուածահաճոյ նախաձեռնութեան իրականացմամբ Դուք Ձեր գովարժան ներդրումն էք բերում մեր Սուրբ Եկեղեցու պէրունապատուէր առաքելութեանը, ինչը վառ վկայութիւնն է Ձեր եկեղեցասիրութեան ու բարեպաշտ ոգու: Ձեր ծառայութեան բարձր գնահատանքով, ընդա-

ռաջնելով Տաւուշի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսեանի խնդրանքին, շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

Ս Ո Ւ Ր Բ Գ Ր Ի Գ Ո Ր Լ Ո Ւ Ս Ա Ւ Ո Ր Ի Չ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Մաղթում ենք, որ նոյն նուիրումով ու նախանձախնդրութեամբ շարունակէք Ձեր հաւատքը վկայել ազգանպաստ ու եկեղեցաշէն բարի գործերով՝ որպէս արժանաւոր զաւակը մեր Մայր Եկեղեցու:

Աղօթում ենք, որ Ամենակալ Տէրը շնորհի Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին քաջառողջութիւն, կեանքի արեւշող բազում օրեր, մշտակայ ձեռքբերումներ եւ Ձեր բոլոր ազգաշահ ձեռնարկները պսակի նորանոր յաջողութիւններով:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ եւ ընդ ամենեսեան. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 26-ն Մայիսի
Յամի Տեառն 2014 եւ ի թուին հայոց ՌՆԿԳ.
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 851